ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

DEPUTY MINISTER OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

«09» 02 2023թ.

№ պնա/2-183

«Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Կ. Հովհաննիսյանին
հասցե՝ Յունիթ Ֆ, 11/Ֆ ՍԻԷՆԹԻ Թաուեր, 338
Հեննեսի Րոուդ, Վան Չայ, Հոնկ Կոնգ
էլ. հասցե՝ rumpes@protonmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊ ընկերության միջև 30.06.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը ոչ ուշ քան 2023թ. հունվարի 4-ը պետք է մատակարարեր Պայմանագրի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքներ, որոնք ընդհանրապես չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. փետրվարի 09-ին միակողմանի մասնակի՝ նշված չափաբաժինների մասով լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 77 751 723 ՀՀ դրամ՝ որպես տույժ, որից 3 691 398 ՀՀ դրամը Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 25.01.2023թ. ներառյալ, իսկ մնացած 74 060 325 ՀՀ դրամը ՀՀ կառավարության 02.06.2022թ. թիվ 821-ԱԳ որոշման N 1 հավելվածի և Պայմանագրի 8.13 կետի համաձայն:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռնարկում է միջոցներ՝ «Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊ ընկերության կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված կանխավճարի ապահովման գանձման ուղղությամբ, որը կազմում է 527 343 525 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am